

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ՈՉ ԷՎՃԱՊՁԲ-24/9/Բ/1/ԻԾ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
11	<p>Մարտաբաճկոն: - Մարտաբաճկոնը նախատեսված հատուկ ստորաբաժանման ծառայողների համար: Մարտաբաճկոնի երեսացուն պետք է բաղկացած լինի սև սինթետիկ կտորից (Кондор տեսակի, մակերեսային խտությունը՝ 1մ/ք 285 գրամ), աստառը՝ սև ցանցավոր կտորից: Մարտաբաճկոն բաղկացած է անթև շապիկի տեսքով առաջամասից և հետևամասից: Հետևամասը կազմված 1 կտորից, առաջամասը՝ 2 կտորից, որոնք առաջամասի կենտրոնում իրար միանում են շղթայով: Առաջամասը հետևամասին կողային (յուրաքանչյուր կողմում 2) և ուսային (յուրաքանչյուր կողմում 1) հատվածներում իրար միանում են մարտաբաճկոնի չափսերը մեծացնող և փոքրացնող ժապավեններով: Հետևամասում նախատեսել կաչունակով գրպան՝ թիկնոց-ուսնոցի համար և գրպանից վերև «POLICE» մակագրությամբ կտոր, գրպանից ներքև կաչունակով գրպանիկ՝ 1-ին բուժ. օգնության պիտուլյների համար: Առաջամասում նախատեսել հետևյալ գրպանիկները՝ - ատրճանակ Մակարովի համար՝ ձախ կողմում, - ատրճանակ Մակարովի պահեստատուկի համար՝ ձախ կողմում, - ռադիկոյանի համար՝ ձախ կողմում, - ձեռնաշղթայի համար՝ աջ կողմում, - արցունքաբեր գազաբալոնի համար՝ աջ կողմում, - լապտերի համար՝ աջ կողմում, - ինքնաձիգի 2 պահեստատուկի համար՝ ձախ կողմում (գրպանիկների ներքևամասը նույն կտորը եռաձալ, որպեսզի գրպանիկը ժամկետից շուտ չմաշվի), - մահակի համար՝ աջ կողմում: Մարտաբաճկոնի ներքևի եզրերով նախատեսել (հետևամասում 1, առաջամասում 2) սինթետիկ գոտուց բաղկացած 6 սմ լայնությամբ օղակներ՝ գոտու համար: Նմուշը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը</p>

հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Փաթեթավորումը՝ սովորաթղթե արկղերով կամ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, արկղերի (պարկերի) մեջ մինչև 20 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը : Մատակարար կազմակերպությունը յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Չափս և քանակները՝ ըստ պատվիրատուի պահանջի:





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ՈՁ ԵԱՃԱՊՁԲ-24/9/Բ/1/ԻԾ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
11	